

ՏԱՍՏԵԼԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՅԻՆ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:
Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները:—Նեիֆին Տե-
ՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիֆլիս: Յունաստան: Յրան-
սիան: Սպանիա: Անգլիա: Նամակ խմբագրին:
Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՐԻՆԻ:—ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՈՒՆՔՆԵՐ

Գերմանիան դեռ շարունակում է զբաղեյ-
նել եւրոպական հասարակական կարծիքը
իր ներքին հարցերով:

Երբ երան գերմանական պարլամենտի հա-
մար վերջին ընտրութիւնները, իշխան Բիս-
մարկ տեսաւ թէ ազգը ուղարկեց պարլա-
մենտ ընդդիմադրական մեծամասնութիւն,
այդպիսով բողոքելով իշխանի անտեսական
քաղաքականութեան դէմ: Բիսմարկ աշխա-
տեց, այնու ամենայնիւ կազմել պարլամեն-
տի մէջ պահպանողական մեծամասնութիւն,
բայց այդ նրան չաջողվեց: Ազգային ազա-
տամիտները, Բիսմարկի հին կուսակցութիւնը,
փոքր են թւով ներկայացուցիչների ժողովի
մէջ, պետական կուսակցութիւնը զրեթէ
անհետացած է, իսկ կղերական կենտրոնը
սկսեց թշնամաբար վերաբերվել դէպի իշ-
խանի քաղաքականութիւնը, չը նայելով որ
նա Հռոմի պապի հետ, վատիկանի հետ
աշխատում է բարեկամական յարաբերու-
թիւններ հաստատել:

Այդպիսով Բիսմարկին երկու ելք էր մը-
նում այդ ծանր դրութիւնից. կամ հաւա-
տարմութեամբ հետեւելով սահմանադրական
ոգուհի հրաժարական տալ իր պաշտօնից,
չը կարողանալով պարլամենտում մի որ և է
մեծամասնութիւն կազմել, կամ կառավարել
երկիրը առանց պարլամենտի, այսինքն ան-
տես առնել եղած պարլամենտը և գերա-
դասել աշխատել կենտրոնական, թագաւորի
իշխանութիւնը, ազգային ներկայացուցիչնե-
րի իշխանութիւնից, այդպիսով ունակելու ա-
նելով գերմանական սահմանադրութիւնը:
Բիսմարկը ընտրեց այդ վերջին ելքը: Եւ ա-
հա հրատարակել տուեց կայսերական հրո-
վարտակը, որ խախտում է սահմանադրու-
թեան զգոյթիւնը:

Բայց իշխանը այդ անելով խառնում է
կայսերական իշխանութեան հեղինակու-
թիւնը կուսակցական կոլիւնների մէջ և նը-
րան միջնորդ է դնում իր և ազգի մէջ:
Կա քաղաքական մեծ անտակտութիւն է
համարվում եւրոպական հասարակական
կարծիքի մէջ: Գործնով ի՞նչ կը շահվի:

Վերջին պարլամենտական ընտրութիւն-
ների ժամանակ ընդդիմադրական կուսակ-
ցութեան նշանաբանն էր «Բիսմարկի դէմ»:
Քանի որ նրան համարում էին պատասխա-
նատու մինիստր և գրանով Հինգի դիպու-
կենտրոնական կառավարութեանը, իսկ ինքն
այժմ գերմանական պարլամենտը արձակվի
և նոր ընտրութիւններ տրուի լինեն, ընդդի-
մադրութիւնը տեսնելով որ պատասխանա-
տուն մինիստր չէ, այլ կառավարութիւնը,
թագաւորը, կամ սերելով ծեր թագաւո-
րին, ստիպված կը լինի գոհել սահմանա-
դրութիւնը, կամ եթէ ուղեւնայ հաստատա-
րելով մեալ սահմանադրութեանը, ստիպված
էլ լինի այդ անել....

Իմ մեալ սահմանադրութեանը, ստիպված
էլ լինի այդ անել....

Ահա ինչ դրութեան մէջ գրեց Բիսմարկ
իր անձնական շահերի, իր փառասիրու-
թեան համար ծերացած թագաւորին, դեռ-
ւով նրան իր և ազգի մէջ միջնորդ, իր բո-
լոր արածների համար նրան պատասխանա-
տու դարձնելով:

Եթէ այժմ պարլամենտը արձակվի, հե-
տեալ ընտրութիւնները շատ հետաքրքրի
կը լինեն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 2 փետրվարի

Լրագրական խօսքը մեզանում չունի իր յատուկ
նշանակութիւնը. որ և է միայն յայտնադր կամ պաշտ-
պանողը, անպատճառ ինքը ստիպված պէտք է լի-
նի նախ գործով ապացուցանել իր ասածները...
Ահա մեր մեծամասնութեան գաղափարը... Եւ ինչ
էք կարծում մի անյայտ Ամբրոսիոս վարդապետ
իր երեկակայան ուսումնարանի համար կարողա-
նում է հաւաքել 20—30 հազար ռուբլ և անյա-
տանում... Ժողովուրդը անտարբեր է, նրա համար
բոլորը մի է. նա որ և է նպատակի համար նուե-
րաւորութիւն անում է համարեա առանց հասկա-
նալու, քննելու իր արածը, նրա համար այդ մի
պատահական բան էր, նա անում է այդ հետեւելով
մօղային, ընդհանուր տրամադրութեան, առանց
խմանալու թէ իր նուէրը որպիսի արժանահաւատ
ձեռքեր է անցնում. նա նպատակի մէջ զանազա-
նութիւն դնելու հաստատութիւնը դեռ չունի: Անց-
նում է մօտ երկու տարի, ոչինչ տեղեկութիւն,
ոչինչ հաշիւ թէ վարչապետից և թէ մանաւանդ
Թիֆլիսի յանձնաժողովից, որոնք լաւ հասկանա-
լով մեր ժողովրդի արդի վիճակը, ապահով իրանց
համար նստած են....

Բայց դարձե՞ք ուշադրութիւններդ մի ուրիշ տեղ:
—Թիֆլիսի հայոց խնդրի ճգնաժամն է. ամեն
յոյս գործելուց և նիւթական օժանդակութիւնից է
կախված, կեանքի և մահուան խնդիր է, այսօր, վա-
ղը և կամ դուրս յալիտեան պիտի ոչնչանայ ա-
մեն սպասելը, ամեն քաղցր և թանկագին յոյս,
եթէ շուտապէս միջոցներ չը գործադրվեն, ընդ-
հանուր միաբանական այժ, գործունէութիւն չը
լինի....

Մի լրագրի և այն հասարակութեան մեծամաս-
նութեան պատկանող, նրանից փայլալոյզ մի
լրագիր, տարի ու կէս անդադար աղաղակում, գո-
ռում, դուռն է. ժամանակը անցնում է, հարկա-
ւոր է շուտով միջոցներ գործ դնել հայոց խնդիրը
իր սազմի մէջ չը մտցնելու համար, եւրօպա-
յում սեփական թղթակցներ, սեփական օրդան-
ներ ունենալ, հարկաւոր է առանձին պրօպագան-
դիստներ ունենալ, որոնք կարողանան եւրօպական
ազդեցութիւն ունեցող տէրութիւնների հասարա-
կական կարծիքը բարեկ ինպատ թիւրքաց հայերի,
մի խօսքով հարկաւոր է գործել, անխնջ գործել:
Բայց ունի էք ասում... Հասարակութիւնը դար-
ձեալ նոյնն է, նոյն անտարբերը... Հասարակու-
թիւնը թէ և շատ լաւ հասկանալով, ըմբռնում է
այդ խօսքերի ճշմարտութիւնը, բայց և այնպէս
իր մէջ ոյժ, գործութիւն չէ գործում, կամ, հաստա-
տանութիւն չունի, գոնէ ուրիշ յայտնած մտքե-
րը իրագործելու... Երեւի սպասում են, որ առանց
այն էլ հազար ու մի պարսպանքներով բռնա-
ւորված խմբագրութիւնը, այդ դուռն ճշմարտու-
թիւններ յայտնողը իրագործի իր ասածները և
յետոյ գուցէ կանն էլ, թէ ինչ մեծ բան է, մենք
էլ կարող էինք այդ անել....

Ահա տրեմն ուր է համարում լանը. մի մասնա-
ւոր մարդ հաղորդել է հաւաքում և այն ուղ գիտե-
ինչ նպատակի համար, նա կատարեալ յաջողու-
թիւն է գտնում, որովհետեւ ժողովուրդը նպատակի
մէջ ընտրութիւն անելու ընդունակութիւնից զուրկ
է... իսկ մի լրագրի ասածները, մի լրագրի որ
իշխան հասարակական մարդկին ուղղութիւն առ-
ւա պաշտօնը և կոչումը ունի, տառնեւոր արձա-
պանք չեն տալիս, շատ քիչ ընդունակութիւն են
գտնում, որովհետեւ լրագիրը ինքը իր արտայա-
տած գաղափարները միջոց չունի իրագործելու....

Ինչ էլ կարող անել հասարակութիւնը, միթէ,
ընդհանուր ստիպողական դրութիւնը, կրիզիսը
այժմ առաջ ունենալով, էլ կարող ժամանակա-
ւոր մի ընդունակութիւն հիմնել, որի գործը լինել հո-
ղալ քանի մի թղթակցներ պահել և սեփական
օրդաններ ունենալ եւրօպայումս եթէ հասարակու-
թիւնը ուղեւնայ և ուղեւնայ, կամ, հաստատանութե-
թիւն ունենայ շատ բան կանէ. ամենու միայն
որ մի բան է պակաս. հայրենասիրութիւնը և հաս-
տատուն կամք: Եւ այս բոլորը պատահում է այն
ժամանակ, երբ մի ամբողջ ազգի ճգնաժամ է, երբ
առանց այն էլ անտեր, անձայն «Հայոց խնդիրը»
պատրաստվում է յետ քաշվել և տեղի ստել տե-
ւի դրուարներին, իսկ այդպիսի դրուար խնդիր-
նը քաղաքական աշխարհից անտարբեր են....

Յետ նայե՞ք, քննե՞ք պատմութեան էջերը,
պատմելի հայեր, տեսէ՛ք ինչպէս են գործել ընդ-
հանուր ազգային ճգնաժամում, ձեռնից թէ թւով
քիչ և թէ նիւթական կողմից աղքատ ժողովուրդ-
ները....

Այս պայման լինելով, մենք համարձակվում ենք
դարձեալ դիմել «Մշակին», մեր յոյսը նրա վրա
գնել և թող «Մշակի» անունը սերտ կապված
լինի ազգի ապագայ բարօրութեան և բաղա-
ւորութեան հետ, որպէս այդ եղել է մի շարք
հասարակական օգտաւէտ գործերում:

Իմանում է

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գանձակ, 28 դեկտ. 81

Ստորագրութիւն բանալով Գանձակ քաղաքում
«Ժողովրդի զօրութիւն» համար առաջին անգամ ու-
ղարկեցինք խմբագրութեանը 50 ռուբլի, երկրորդ
անգամ 60 ռուբլի, իսկ այժմ վերջացնելով ստո-
րագրութիւնը ուղարկում ենք մնացեալ 15 ռուբլի,
ընդամենը 125 ռուբլի, փոփոխ բոլոր ծախքը վեր
առնելով եւ ինձ վրա խնդրում եմ տպագրել լրա-
գրի մէջ անուանական ցուցակը:

Իվան Կարապաղաբեանց 8 ռ., Ն. Ա. Տէր-Ներ-
սեանց 8 ռ., Մկրտիչ Գ. Ափսեւանց 8 ռ.,
Մ. Թեմուրեանց 5 ռ., Յովսէփ Մկրդ-Բեկլարեանց
5 ռ., Ն. Մեկրեանց 4 ռ., Ղ. Ս. Յովհաննէսեանց
4 ռ., Ա. Խաչատրեանց 4 ռ., Մ. Մկրտումեանց 4
ռ., Մադաթ Մելիքով 4 ռ., Ա. Համբարձումեանց
4 ռ., Յակոբ Լիւթիեանց 4 ռ., Իվան Մարգա-
րեանց 4 ռ., Յ. Մկրդով 2 ռ., Ա. Մեկրով 2 ռ.,
Յովհաննէս Խաչատրեանց 2 ռ., Ս. Մնացական-
եանց 2 ռ., Աւետիս Վարդապետով 2 ռ., Գ.
Տէր Յակովբեանց 2 ռ., Յակովբ Բեկ Ասիլով 2 ռ.,
Տէր Մկրտիչ Տէր-Յովսէփեանց 2 ռ., Գաբրիէլ
Թումանեանց 2 ռ., Համբարձում Խաչիկով 2 ռ.,
Տյւտաթ Բեկ Մեռնի Ահիմալով 2 ռ., Գյ-
րաթ 2 ռ., Յովհաննէս Տէր Աստուածատուրեանց
1 ռ., Սարգիս Արտուսեանց 1 ռ., Սեդրա 1 ռ.,
Սարգիսաթ Գ. Տէր Գանիկեանց 1 ռ., Եսգոր Գ.
Յովհաննէսեանց 1 ռ., Իվան Եղիշեանց 1 ռ., Յով-
սէփ Տէր Խաչատրեանց 1 ռ., Յակովբ Տէր Յարու-
թիւնեանց 1 ռ., Մկրտիչ Օսանեանց 1 ռ., Իվան
Ս. Մանուկի Յովհաննէսեանց 1 ռ., Աղէքսանդր
Եսայեանց 1 ռ., Յ. Թառամեանց 1 ռ., Աղայ Ա.
Զուրաբով 1 ռ., Միքայէլ Համբարձումեանց 1 ռ.,
Խաչիկ Մանիկեանց 1 ռ., Մարգարէ Տէր Յով-
հաննէսեանց 1 ռ., Մկրտիչ Մանուկեանց 1 ռ.,
Ստորման Արամեանց 1 ռ., Սարգիս Ափսեանց 1

ռ., Հայ Դմի 1 ռ., Մինաս Իզրայելով 1 ռ., Մե-
լում Մ. Դանապարեանց 1 ռ., Արշակ Աղիբե-
կեանց 1 ռ., Իվան Մարկսեանց 1 ռ., Թէմուր
Բեկ Մ. Մնացականեանց 1 ռ., Աւետիք Աւարով
1 ռ., Գրիգոր Բեկ Մ. Դանապարեանց 1 ռ., Զհան
Խաչատով 1 ռ., Մ. 1 ռ., Միքայէլ Տէր Աւետի-
քեանց 1 ռ., Թադէով Վարդապետ 1 ռ., Ածյա
Բեկ Տափաքթեանց 1 ռ., Սիմոն Ղազարեանց
1 ռ.: Ընդամենը 125 ռուբլ:

Իվան Կարապաղաբեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 3 փետրվարի

Ճշմարիտ մարդկութիւնն ու անկեղծ բարոյա-
կանութիւնը պահանջում են մարդուց՝ օգնել իր
ցեղակից կարօտեալներին ամենայն հանգամանք-
ներում:—Որչափ աւելի արագան և պարտաւոր-
ցուցիչ է մարդու ազդ պահանջը, երբ օգնութիւնն
ու նպատակը գործ են դրվում իր համարակիցների
վերջերը դարմանելու, բուժելու:—Եւ ուր է ներ-
կալ դարձում աւելի կարօտ օգնութեան, քան
մենք հայրա: Սրտի կատարեալ ուղարկութեամբ
և հրճուածք խոտովանվում եմ, որ այդ պարտա-
ճանաչութիւնը բարեբաղդար, ինչպէս կը վկա-
յին վերջին երեք, չորս տարեկան փորձերը, իր
բուն, վեհ նշանակութեամբ արդէն զգացված է
մեր մէջ և միզանից իւրաքանչիւրը, մանաւանդ
ստորին դասը, իր քրտնախտան աշխատանքի
միշտ ըստ չափու կարողութեան մասն է հանել
ի նպատակ իր ազգակցաց բարօրութեան, և հա-
նում էլ է՝ Հնդկի և դրոմադր այն ազգասիրա-
կան պարզ և եռանդուն ոգու, որ ներշնչել է մեր
սրտերի մէջ ազգային «Մշակը» իր տալիս տար-
վայ չլքանի եւ ունի և անձուէր գործունէու-
թեամբ: Մենք մեր ինքնաճանաչութեամբ ու բե-
րած ամեն տեսակ զոհերութիւններով պար-
տական ենք «Մշակին». չը խոտովանելու այդ կը
նշանակէ մեղանշել ճշմարտութեան դէմ: «Մշակը»
ոչ թէ միայն եւրօպականացիք մեր մամուլը,
այլ հայ անուրը եւրօպական պարբերական
թերթերին ծանօթացրեց: Մեզ մնում է բա-
րեւիտեղիք նրան երկար կեանք, յաջողութիւն և
արագ քայլեր ստանալովութեան ճանապարհի
վրա:

Մեր պարտականութիւնն է միշտ և անընդ-
հատ թէ նիւթապէս և թէ բարոյապէս օգ-
նելու և օժանդակելու ամեն բարի գործին, որով-
հետեւ չը պէտք է բաւականաւոր մի անգամայն
տուժով կամ արածով: Մենք մեր աշխատանքաց
արդիւնքն ու նուիրած կօպէկները մեր ազգի
ձեռքում կենդանի պատկերացած կը տեսնենք,
ուրեմն օգնենք, միշտ օգնենք, որով և սիրտ, աշ-
խոյժ ու արիւնքիւն կը տանք աւելի մեծ բարե-
բարիքին իրանց գործունէութեան ասպարի-
զում:—

Վերջացնելով նամակս յայտնում եմ որ կամե-
նալով այս բարեկեցական օրերին մի փոքրիկ
նպատակ հասուցանել տաճկահայաստանի որր ազգա-
կիցներին, յունվարի 30-ին հանգանակութիւն
բացի Սալի-Օղլու տեղւոյ ծիսական գործարանի
բանաւորների մէջ, քանի որ տալիս էի նրանց
իրանց շարժական հասոյթ վարձը և 5, 10
կօպ. նուէրներով հաւաքելի 15 ռ. 33 կօպ., որի
վրա և իմ խնդրանքս ու Միքայէլ Սարգսեանց
աւելացրեց 14 ռուբլի 67 կօպ. եղաւ 30 ռուբլի,
որ նամակաւ ներկայացնելով, խնդրեմ բարեհա-
ճել հասուցանել Վ. Պօլսի Դալֆայեան օրդան-
ցին:—Յանկալի կը լինէր, որ մեր միւս գործու-
րաններում եւս, ուր բանում է հայ մեծամասնու-
թիւնը, տարեկան մի երկու անգամ գոնէ հանգա-
նակութիւն անէին որ և է ազգայնաճ նպատակի
համար: Եւ, իմ կողմից խոտովանում եմ անել այդ
մեր գործարանում:—

Պարտք եմ համարում այստեղ հրապարակու-
նորհակալութիւն հասուցանել Վ. Պօլսի Դալֆայե-
անցին, որը իր առաւատճանութեամբ ու

բարեբաղնական միտք օրինակ է եղել նոյն ֆարքիկայի գործադրողներին, և ամեն շարքի երեկոներ, շատ քիչ բացառութեամբ, միշտ հանգանակութեան քառակ է բանում տեղիս զանազան աստիճանի չքաւորներին օգնելու:—

Յովհաննէս Ս. Ստեփաննանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներքի ամբողջ օր «Միջազգային ընկերութեան» հեռագիրները չը ստացվեցան խմբագրութեան մէջ և «Մշակի» երեկոյան համարը հրատարակվեցաւ, այդ պատճառով, առանց հեռագիրներին:

Պ. Աբրահամ Շիրինեան խնդրում է մեզ տպել հետևեալը: «Արդէն ձեռնարկել եմ թարգմանելու կոմունիստի դր Սիւզերի «Արձակութիւն» հեղինակութիւնը (Կանիւլա), որ շուտով և պատրաստ կը լինի: Ուստի խնդրում եմ յարգելի թարգմանիչներին, այլ եւ չը ձեռնարկեն նոյն գրքի թարգմանութեանը:»

Մեզ գրում են որ թիֆլիսի Ներսիսեան դպրոցի մի վարժապետ աշակերտներին դատի ժամանակ «չաշանակ», յիսար, խելագար, խող» և այլ այդ տեսակ խօսքեր է ասում: Իսկ նոյն դպրոցի մի այլ ուսուցիչ ծնծում է աշակերտներին: Հրապարակում ենք դպրոցի հոգաբարձուներին ուղարկութիւնը այդ տխրալի երեւոյթներին վրա: Թող չը մոռանան որ դպրոցը կրթարան է նոր սերունդին և ոչ թէ փշագնդոյ նրա բարոյականութեան:

ԲԱԹՈՒՄԻՅՑ, յունվարի 29-ից, մեզ գրում են: «Այսօր դեռ չարժանաւոր է ստատիկ ձիւն գաւարդէն 1 1/2 արշիլի բարձրութեամբ եկած է: Այս տարւոյ ձմեռը մեզ յիշեցնում է 1879 թի խիստ ձմեռը: Չը նայելով որ ձիւն է գալիս և ստատիկ քամի է անում, երկնայեանները ամպը գոռում է և որոտում, ինչպէս ամառ ժամանակ: Քսան օր է արդէն որ փոթիի հետ ծովային հաղորդակցութիւնը բոլորովին կտրված է փոթիի կտրուկ պատճառով: Փոթիի քնացող բոլոր շողերները տեղիս նաւահանգստի մէջ են ժողովել: Ահալին «Բոսփոր» շողերը չէ կարողանում փոթիի նաւահանգստին մօտեցալ իր 1700 նորընտիր դիմուկները ափ իջեցնելու համար: Տաս օր է որ նաւը սպասում է ծովի խաղաղվելուն:»

Մեզ պատմում են որ վերջին ժամանակները թիֆլիսում փողեր ժողովելու ժամանակ հայ դեռաւանդներին ընծաներ տալու նպատակով, մեծ զեղծումներ են կատարվում: Մի տեղ փող են ժողովում, բայց չեն հասցնում ուր հարկն է ընծան առնելու համար, մի այլ տեղ, տեսնելով որ ժողովուրդը զգուշ է արդէն անդադար փող տալուց դեռաւանդների ընծաների համար, մի քանի պարոններ թէ և չարժանաւոր են նոյն նպատակով փողեր հաւաքել, բայց ուրիշ անուն են տալիս հանգանակութեանը, օրինակ ասում են թէ փողը ժողովում են մի աղքատ ընտանիքի համար և այլն:

Հինգշաբթի, փետրվարի 4-ին, հայ դեռաւանդական խումբը ներկայացրեց թիֆլիսի թատրոնում մի նոր պատմական, հինգ գործողութեամբ պիէսա «Ռուզան» վերնադրուի հեղինակութիւն Գ. Մուրադյանի: Հեղինակը թաղմով է համեմատաբար կեղծ անունի տակ: Թատրոնը լի էր:

Թիֆլիսի կրտսերական գիմնազիայի դիւրեկտոր պ. Մարկովի նրատարակած հաշիւ մէջ, գիմնազիայի յիսնամայ յօրերեանի առիթով, գտնում ենք հետեւեալ կարծիքը հայ գիմնազիական մասին: «Մենք դո՛ւ ենք աշակերտների մեծամասնութեան աշխատասիրութեան մասին: Մասնաւոր այդ կողմից յայտնվում են հայ աշակերտները: Բարձր դաստաներում նրանք այդ պատճառով կազմում են նշանաւոր մեծամասնութիւն, տիրապետող տարր, այն է 60% և աւելի ամբողջ ուսում առնողներից, այն ինչ ամբողջ գիմնազիայում հայերը հաղիւ 32% են անցնում: Օրինակ ներկայ թիւն 8-րդ դասարան 25 աշակերտներից 15 հայեր են: Գրեթէ ամեն տարի աշխույժութեամբ ուսում աւարտողների նշանաւոր մասը, դարձեալ հայեր են:»

ՄԾՍԿԻՎԱՅԻՑ մեզ գրում են: «Յունվարի 1-ին, ինչպէս ձեզ յայտնի է լրագրիւններից եղաւ Մօսկվայի համալսարանի յօրերեանի հանդէսը: Նոյն

օրը, երկուշաբթի Կոմիտասեան ձաշ էր. մեզանից մինչև յիսուն հոգի կային: Զատեր շատ արտասանվեցան, նոյնպէս բարձրացրին բաժակ ի պատիւ ազաւթայ Կովկասեան համալսարանի: Այս օրերս մի մասնաւոր շրջանում կարդացվեցան գիտնական լեֆէրատներ: Պ. Քալանթար, որ վերջացրեց իր ուսումը Պետրոփոլի բարձրագոյն դպրոցում և այժմ քարտուղար է Ռուսաց Տնտեսական ընկերութեան, կարդաց մի լեֆէրատ «Ռուսաց դրուկանութեան նոր ուղղութեան» մասին, պ. Տէր Քարսեղեան կարդաց «Համայնական հոգաւորութեան մասին» և վերջապէս պ. Թանդեան «Հայոց վիպասանութեան» մասին: Հասարակ ցանկութիւն յայտնեցին գրել լեֆէրատներ: Չեղ արդէն յայտնի է որ այստեղ կազմվեցաւ «Հայոց բարեգործական» ընկերութիւնը, որի կանոնադրութեան համար այժմ աշխատում են պ. պ. Չանչեան, Ներսիսեան և ուրիշները: Այդ կանոնադրութեան մէջ եւ միայն մի բան չեմ հաւանում, այն է որ ընկերութեան անդամներ կարող են լինել միմիայն հայ-լուսաւորչականները:»

Բաթումի մեր թղթակիցը չորհաւորելով «Մշակի» տաս տարւոյ տարեգրքը ասում է: «Յանկալի է որ այդ տաս տարւոյ ձեռք գործունէութիւնը պատկի ձեռք ցանա՞ծ գաղութարների գեղեցիկ պատմութիւնը, որոնց օգուտը խիղճ ունեցող ամեն հայը անշուշտ գլուխ է: «Մշակը» հայերէն կարգաւ սովորեցրեց մեր ազգի ստորին դասակարգին և ամաչեցրեց արիստոկրատ հային, որ հայերէն չէր ուսում խօսել, արհամարհանքով վերաբերվելով դէպի ազգութիւնը: Կովկասեան հայերը առաջին անգամ տեսան իրանց հայրենիքում մի հայերէն լրագիր և այժմ ամեն հայ կարող է իրաւամբ պարծենալ կարողացող առջև որ ունի ազգային լրագիր թիֆլիսում: Եթէ առաջի տասնամիակում այդքան աշխույժութիւն ունեցաւ «Մշակը», այնուհետեւ յաղթութեան մրցանակը ձեռք է ձեռքին է Այն ժամը, որ դուք անկեղծ և տաս տարի շարունակ խնամեցիք, նրա արմատից ուրիշ ծառեր կ'աճեն, նրա սերմից ուրիշներ կը բուսնեն: Չը քարոզած մտքերը, եթէ անտարբերութեամբ են ընդունվում մեր բարձր դասակարգի, ինտելիգենցիայի մէջ, ուրիշ կողմից նրանք ահալին ընդունվելով զստան մեր ստորին ու միջին ժողովրդի, ամբողջ մասաւոր պարտ հողի վրա:»

Այսօրվայ համարում հրատարակում ենք Գանձակից պ. Կարապետեանից մեզ ուղարկված ցուցակը «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդների: Փողը մենք վաղուց ստացանք և միացրինք ընդհանուր գումարի հետ, իր ժամանակին յայտնելով թէ ստացանք այդ գումարները մաս մաս պարտից: Իսկ ցուցակը միայն այժմ կարողանում ենք հրատարակել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ԹԻՒՐԻՔԻԱ

Հայոց խնդիրը, ասում է «Голосъ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, կրկին նոյն դրութեան մէջն է գտնվում, ինչ դրութեան մէջ որ գտնվում էր անցեալ տարւոյ գարնանը, և մինչև անգամ, աւելի լաւ ասած, առաջ գնալու փոխանակ, նա յետ է գնում: Բերլինի դաշնագրութեան նպատակն էր թիւրքաց կառավարութեան լծի տակ գտնվող հայերի անտանելի և ծանր դրութիւնը թեթեւացնել, այն ինչ, ամբողջ երեք և կէս տարուց յետոյ, լաւանալու փոխանակ, հայերի դրութիւնը աւելի ևս վատացաւ: Ահա փաստերը: Բ. Գուռը, իր խնդրանքով, զօրեղացրեց և վառեց Տունիսի խնդիրը, բարձրացրեց և պաշտպանում է եղիպտական հարցը, դիպլոմատիային առաջարկեց Ֆրանսական խնդիրը, որոնք բոլորն ի միապէս զրաւեցին և գրաւում են Եւրօպայի հասարական կարծիքը ուշադրութիւնը: Գեռ ևս անցեալ տարւոյ յունիսին, Բ. Գրանտ աւանձին կարգադրութեամբ, Հայաստանում քրիստոնէւթ-պաշտօնեաների մեծամասնութեան փոխանակ մահմետական պաշտօնեաներ նշանակվեցան: Այդ փաստի նշանակու-

թիւնը խրատական է: Նոյնպէս բոլորին յայտնի է Կիլիկիայի կաթողիկոսի գործը, որը վեց ամբողջ ամիս ձգձգվում է: Բ. Գուռը անտես առնելով հայոց եկեղեցու բարձրագոյն տեսները, Սիւսի կաթողիկոսին Ֆիրման տուեց, որով ազատում է նրան Կ. Պոլսի պատրիարքարանին հպատակվելուց, և յետոյ մի և նոյն տեսակ Ֆիրման տուեց և Եջմիածնի կաթողիկոսին: Գրանով նա նախ երեքեց Բերլինի դաշնագրութեան 62-դ յօդուածը, որը հոգեւոր վարչութիւնները ապահովում է Բ. Գրան որ և է տեսակ միջամտութիւնից, երկրորդ, կատարելապէս դիպաւ Ռուսաստանի շահերին, որի սահմաններում ապրում է հայոց եկեղեցու վարչութեան գլուխը:

1881 թի նոյեմբերի 15-ին, Կ. Պոլսի Ներսէս պատրիարքը հրաժարական տուեց: Պատրիարքին նորից հրաժարական տալու գրգիռ պատճառները, ինչպէս նա Սարգսի վաշայի իր տուած խնդիրի մէջ պաշտօնական բացատրեց, հետեւեալ եօթն կէտերից ցոյց են տալիս, թէ Բ. Գուռը ինչ նոր իմաստուն քայլեր արաւ հայերի կարիքներին բաւականութիւն տալու համար: 1) Բ. Գուռը սիստեմատիկաբար աշխատում է ոչնչացնել Կ. Պոլսի հայ պատրիարքարանի դաւեր իրաւունքները և իւրաքանչիւր քայլափոխում մանաւանդ Կիլիկիան հարցում: 2) Սուլթանի կառավարութիւնը առանց որ և է հիմքի և ապօրինի կերպով, պատրիարքի հակառակ, Կ. Պոլսի կանչեց Հայաստանի համարեա բոլոր թեմակալ առաջնորդներին և զրանով հայոց դաւաճների գործերը խառնակ դրութեանն է հասցնում: 3) Մի քանի ժամանակից արդէն խիստ ցնցուրա է նշանակած մասնաւորապէս հայ պարբերական հրատարակութիւնների և գրքերի վրա, երբ հենց չարագործութիւններն աճած ժամանակ, ազատութիւնը, թէ կուզ դա առաջվանը լինէր, վերին աստիճանի անհրաժեշտ է: 4) Բ. Գուռը մէկ վճիռ հրաժարեց, որով վերանորոգութիւններին կուսակից իւրաքանչիւր հայ ազատամբ է հաւանորդում և արտաքց կարգի օրէնքներին եւ թիւրքաց: 5) Բ. Գուռը սկսեց հայ ուսումնարանների ուսումնարանական գործի մէջ խառնվել, և զրանով փոխանակ օգնելու, վնասում է նրանց առաջադիմութեանը: 6) Բ. Գուռը հայոց ազգային հիւանդանոցին և այլ բարեգործական հիմնարկութիւններին դադարեց տալ օրէնքով սահմանված վճարը (մօտ 30,000 լուր): 7) Մինչև այժմ ոչ միայն կատարելապէս ոչինչ չէ ձեռնարկված Հայաստանում բարեկրթութեան մոյցները խնդրի համար, բայց գործերի դրութիւնը դեռ աւելի ևս վատանում է: Ներսէսի հրաժարականից մի քանի ժամանակ յետոյ նրա գլխաւոր յաջորդ Բուշուկեանը ևս հրաժարական տուեց: Եւ դա շատ բնական է: Բ. Գուռը չէ ընդունում Ներսէսի հրաժարականը և նրա պահանջներին էլ բաւականութիւն չէ տալիս, որ նա կարողանայ ընդունել իր պաշտօնը:

Իսկ Ներսէս պատրիարքը հրաժարվում է կատարել իր պաշտօնական պարտաւորութիւնները և այդպիսով ամբողջապէս գործերը ստիպված է լինում կատարել նրա փոխանորդը, որ շատ դժուար է, մանաւանդ գործերի այդպիսի խառնակ դրութեան ժամանակ, որի պատճառն է Բ. Գուռը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ
Օտար լրագրիւնների մէջ տպված է հետաքրքիր Աթէնքի յունվարի 31-ից յունական

պատգամաւորների ժողովի բացման մասին: Գէորգ Թադաւորի արտասանած զահական ճառը ուրախութեամբ յայտնում է, որ պատգամաւորների ժողովի աշխատանքներին կը մասնակցեն նորերում և Յունաստանի հետ միացրած նահանգներում ընտրված պատգամաւորները: Պետութիւններին հաճոյանալու համար Յունաստանը համայնակեց փոքրացնել այն երկրների քանակութիւնը, որ Բերլինի դաշնագրի համեմատ նա պէտք է ստանար և այդպիսով նա զհենց իր շահերը ընդհանուր խաղաղութեան համար: Գահական ճառը մասնաւորապէս է լինում, որ Յունաստանի հետ միացրած նահանգների մէջ հանգստութիւն է տիրում և յոյս է յայտնում, որ շուտով կը վերջանան այն դժուարութիւնները, որոնք ծագեցան յոյն-թիւրքական սահմանագիծը որոշելու ժամանակ: Գահական ճառը թուում է զանազան միջոցներ, որոնք պէտք է գործադրվեն Յունաստանի Ֆինանսական դրութիւնը բարելաւելու համար և պնդում է, որ յունական կառավարութիւնը, յարաբերութիւններ ունենալով եւրօպական պետութիւնների հետ, աշխատում է պահպանել խաղաղութիւնը:

Ձմեռնիայից «Polit. Corresp.» լրագրին գրում են: Երբ երկու տարի սրանից առաջ Յունաստանը վերակազմում էր իր գոյքերը և զինուորներ էր հաւաքում, Թիւրքիայի բոլոր մասերից յոյները հաւաքվեցան, որպէս զի իբրեւ կամաւորներ ծառայեն յունական գոյքերի մէջ: Այդպիսով յունական գոյքերի թիւը բաւական նշանաւոր էր: Այժմ քանի որ Թեսսալիան առանց պատերազմի Յունաստանի ձեռքն անցաւ, յունական երիտասարդութիւնը, որ մտածում էր օգնել իր հայրենիքին, վերադառնում է Թիւրքիա իր ընտանիքների մօտ: Ձմեռնիան հնուց կարելի է յունական քաղաք համարել, որովհետեւ բացի այն, որ այնտեղ բնակվում են 30,000-ից աւելի յունահայատակ յոյներ, գրեթէ նոյնքան էլ թիւրքահայատակ յոյներ կան: Այդ քաղաքը յունական գոյքերի համար բաւական շատ կամաւորներ ուղարկեց և այժմ դրանց վերադառնալուց յետոյ Ձմեռնիայի փողոցները կառարկապէս լիքն են յունական զինուորապետներով: Թիւրքաց վարչութիւնը բոլոր միջոցներով աշխատում է վրէժնիկի լինել այն յոյներից, որոնք յանդիման մանկ յունական ծառայութիւնը: Ամենայն օր թիւրք-զինուորները յունական նախկին կամաւորներին խուճերով տանում են նահանգապետի տունը, որտեղ նրանց մի քանի օր կարանաւորեցուց յետոյ արձակում են: Նրանցից շատերը յունական անցագրեր ունեն, այդ պատճառով նրանց անկարելի է դատաստանի ենթարկել: Դատ վատ է թիւրքահայատակ յոյների դրութիւնը: Թիւրք վարչութեան վարժուկները ստիպեց յոյն կամաւորներին զոյշ լինել: Թիւրքահայատակ յոյները թողել են յունական զինուորապետները: Բայց կան և այնպիսիները, որոնք բռնվել են և հալածվում են: Այդպիսիներին օգնելու համար յոյն վաճառականները մի մասնաժողով են կազմել, որին բաւական նշանաւոր գումար են նուիրել:

ՖԻՆԱՆՍԱ
Լրագրիւնների մէջ տպված է Ֆրանսիական մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր Ֆրէյսիէի նամակը, որ նա ուղարկեց բոլոր պետութիւնների ներկայացուցիչներին Ֆրանսիական Հանրապետութեան առաջ: Փարիզ, 31 յունվարի 1882 թուա-

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

